

չուող Անայ շրջակայքում գտնուած սեպագրութիւնների լեզուն, ոչ արիական, բայց այժմեան Հայոց երկրի վերայ բնակուող մի ժողովրդի լեզու է եղել: Անգլիական գիտնական Մէյսը (Sayce), որ աշխատել է նոցա բնթերցման համար, կարծում է, թէ այդ ազգը ցեղակցութիւն պիտի ունենայ Վոլկասի հարաւային վիրական ցեղերի հետ, որոնց նորեկ Հայերը գէպի հիւսիս են քշել: Սակայն այս կարծիքը միանգամայն անհաստատ է, թէև քնդունելի է, որ այդ ցեղերը նորեկ Հայերից գէպի լեռները մղուել կարող էին: Դորա հակառակ նորերս փորձ է արուած Փորթ-Ասիայում գոյութիւն ունեցող յիշատակարանները հին հայերէն ցոյց տալ: Եյդ յիշատակարանները Հնթխուան կոչուած արձանագրութիւններն են, որոնց վերաբերութեամբ նորերս Մարութի համալսարանի պրոֆ. Ենսէնը (Iensen) մի նոր, բոլորովին անսպասելի հիւպոթէզ է կազմել: Ենսէնի քննութիւնների համաձայն այդ արձանագրութիւնները պէտք է Գրիստոսից առաջ՝ եթմներու դարու առաջին կիսում գրուած լինին և մեծ մասով Վիլիկիայի թագաւորների ձեռքով, կամ Վիլիկիայից ծագում ունեցող թագաւորների որոնք Վիլիկիայի և Թարսիսի հետ յարաբերութիւն ունէին: Նա առ այժմ այս արձանագրութիւնների համար Վիլիկիան անունն է առաջարկում: Կարող փորձելու ժամանակ Ենսէնը լեզուական մի քանի այնպիսի հաստատ իրողութիւններ է նկատել, որ նա կերպակացրել է, թէ այս արձանագրութիւնների լեզուն ոչ միայն հինգ-գերմանական է, այլ և մասնաւորապէս հայերէնի հետ մօտ յարաբերութիւն ունի: Եյս արձանագրութիւնների լեզուն կամ այժմեան հայերէնի նախաստիճանը պիտի լինի, կամ գոնէ շատ մօտ ցեղակից կարծեցեալ հին հայերէնի հետ: Ենսէնի կարծիքով մինչև իսկ Հայ անունը, ինչպէս հայերը անուանում են իրենց, «Հաթի բնակիչներ» պէտք է հասկանալ, այսինքն Վիլիկիայի այն մասի, որ հայոց Բարձրագաւառին ամենամօտն է: Ենսէնի կարծիքները առ այժմ՝ ազատ չեն առարկութիւններից, իսկ եթէ նորա առաջ բերած հիմունքներն ընդունուին, այն ժամանակ հարկաւ աւելի կպարզուին Փորթ-Ասիայի հին լեզուների գաղտնիքները: Ինչ որ էլ լինի, այսքան հաստատ է, որ Հայաստան խուժած Փաւգացիները և նոցա հետ միացած միւս ցեղակից ազգերը Փորթ-Ասիայի բարձրաւանդակի վերայ, ուր նոքա հաստատուեցան, բնիկ ժողովրդների են հանգիպել, որոնք մասամբ ձուլուել են, մասամբ էլ ապաստան են գտել թերակղզու ծայրերի լեռներում *):

Գ. Ս.

Դեռ մենք Գերմանիայից էինք մեկնել, երբ մեր մեծարդ բարեկամ պրոֆ. Ենսէն մի յօդուածով լեզուագէտների ուշագրութիւնը հրաւիրեց վերև յիշուած տեսութեան վերայ: Շատ չանցած ստացանք նորա բաւական ստուար աշխատութիւնը *), ուր պարզուած են նորա հայեացքներն այս մասին

*) Ենսէնի գիտի համար տես Հանդէս Ամսօրեայ 1894. հոկտեմբեր. եր. 347. Նախակիկեան Հաթեան արձանագրութիւնը. յօդուածը:

*) Grundlage für Entzifferung der (hatischen oder) cilicischen (?) Inschriften. Leipzig 1894 (կամ ZDMG p. 235 - 352).

և լեզուագիտական հիմունքներով պատճառաւորուած: Սակայն այս աշխատութիւնը, ինչպէս և նորա աւելի ուշ լոյս տեսած մի յաւելուածը, այնպիսի խոր մասնագիտական ոճով են գրուած, որ ոչ լեզուագէտը մեծ քանք պէտք է գործ դնէ նոցա բմութելու և ուրիշներին ծանօթացնելու համար: Մենք զժաղդաբար միջոց չունեցանք այդ քանքը գործ դնելու և ձեռնհաս իսկ չհամարեցինք մեզ այդպիսի ուսումնասիրութեան: Բայց երբ այժմ առիթը ներկայանում է, աւելորդ չենք համարում հետաքրքիր ընթերցողի ուշագրութիւնը խնդրի մի գործնական կողմի վերայ դարձնելու: Հնթխուան արձանագրութիւնները գտնուել են մինչև այժմ հիւսիսային Ասորիքում և Վիլիկիայում և վաղուց արդէն գրաւել են գիտնական աշխարհի ուշագրութիւնը: Բայց նոցա ընթերցանութեան գաղտնիքը գտնելու քանքերը ապարդիւն էին անցել: Արդ, եթէ ստուգուի Ենսէնի ենթագրութիւնը և հաստատուի, որ այդ արձանագրութիւնները գրողները մեր՝ Հայերիս, Նախահայերն են եղել, պէտք է կարծել, որ նոքա մեր երկիրը գաղթելուց յետոյ ևս (մօտաւորապէս 2. դարում Գրիստոսից առաջ) նոյնպիսի արձանագրութիւններ թողած լինին: Աւելորդ է ասել, թէ ինչ մեծ գին կունենայ նոցանից իւրաքանչիւրը գիտութեան համար, եթէ գտնուի, և ինչքան կնպաստէ մեր պատմական մութ անցեալի վերայ մի լոյս սփռելու: Եյդ արձանագրութիւնները փորագրուած են առհասարակ քարի վերայ և շատ նման են եգիպտական սրբագրերին: Նոքա բաղկացած են գաղափարների, վանկեր և տառեր արտայայտող նշաններից, որոնց մէջ յաճախ են պատահում կենդանիների (օր. նապաստակի, թռչունների) և մարդու, կամ նորա մարմնի զանազան մասերի, նորա գործածած առարկաների պատկերներ: Եյդ կարգի ամենալաւ յիշատակարաններից մէկը մենք տեսանք Վ. Պոլսի թանգարանում: Գորագրուած չորրորտանու ձև ունեցող ամուր քարի վերայ, եթէ որևէ տեղ գտնուի այդպիսի բան, խնդրում ենք տեղեկութիւն տալ «Արարատ»-ի խմբագրութեան, որ իւր կողմից կձեռնուցանէ այդ մասին, ուր որ հարկն է: Պրոֆ. Ենսէն ճրագով է ման գալիս նոցա: Եյդ չափազանց եռանդուն և սրամիտ երիտասարդ գիտնական իւր տեսութեան համար շատ հեղինակաւոր անձերի կողմից արդէն հաւանութիւն է գտել, և լոյս կարելի է ունենալ, որ նորա աշխատանքը ապարդիւն չի անցնի:

«Արարատ»-ի սղն թուականի Ապրիլ համարում մեր իբրև յաւելուած հրատարակած Գրիգոր Աբանշեյազործի գրութիւնները պրոֆ. Կոնիքի լատիներէն է թարգմանել, անգլիերէն ծանօթութիւններով: Բայց մեր ձեռքը հասել է մինչև այժմ այդ թարգմանութեան միայն մի կտորը: Սպասելով ամբողջին, նախընթաց համարի հետ հրատարակեցինք Աբանշեյազործի մեր այն ժամանակ խոստացած միւս անտիպ ծառը:

Պրոֆ. Կոնիքի շարունակում է ամենայն ջանասիրութեամբ հայկական ձեռագիրներից նիւթեր քաղել նախնեաց գրուածքները պարզաբանելու համար: Մի քանի ամիս առաջ նա հրատարակել է Philo about the contemplative life (Փիլոս՝ հայեցողական կեանքի մասին) կարեւոր գործը, 16 յունական

ձեռագիրների, լատիներեն և հայերեն թարգմանութեանց համեմատութեամբ, Վերջինս տպագրելու համար նա ձեռքի տակ ունեցել է 4 ձեռագիրներ (2-ը ս. Էջմիածնի և 2-ը Վենետիկի) և կարողացել է նոյնանով պարզարանել բնագրի մի շարք թերի կամ մութ մնացած տեղեր:

Կ. Վ.



ՊՐՈՓ. ՖԵՏՏԵՐԻ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առ Կոթնթացիս Երթող տարականն թղթի մասին:

Անուանի հայադէտ Պրոֆ. Ֆետտէրը ուղարկել է մեզ իւր վերջերս լոյս տեսած մի նոր բրոշիւր՝ «Առ Կորնթացիս Գ. տարականն թղթի մի բարբառական աղբիւր» * վերնագրով, որ ներկայացնում է մի լրացուցիչ հետազոտութիւն նոյն խնդիրների նկատմամբ, որոնք նիւթ են եղել նորա անցեալ տարուայ՝ «Առ Կորնթացիս Գ. տարականն թուղթը» ** գեղեցիկ և մանրագին հրատարակութեան: Այդ անվաւերական թղթի հայերեն թարգմանութիւնը վաղուց արդէն յայտնի է գիտնական աշխարհին, անցեալ դարում Չ անգամ տըպագրուել է Եւրոպացիների ձեռքով և ապա լոյս է տեսել իրիւր յաւելուած Հ. Չոհրաբեանի և Հ. Արսէն Բագրատունու Աստուածաշունչի հրատարակութեանց, Բացի դորանից 1823-ին թարգմանուել է գերմաներեն և գիտնական ծանօթութիւններով լուսարանուել աստուածարան Բինկի աշխատութեամբ, 1890 թ. ից յետոյ գտնուել են նաև այդ թղթի երկու իրարից անկախ լատիներեն թարգմանութիւնները: Այնուհետև Հայերեն թարգմանութեամբ պահուել է Եփրեմ Ասորու՝ ի շարս Պօղոս Առաքեալի կանոնական թղթերի, նաև այս թղթի մեկնութիւնը, որ պ. Ստ. Կանայեանց թարգմանել է Գերմաներեն և Պրոֆ. Յասն հրատարակել է իւր «Նոր կտակարանի կանոնի պատմութիւն» *** նշանաւոր գրուածքի մէջ, Վերջապէս Եփրեմ Ասորու հետեւողութեամբ մի մեկնութիւն ևս Յովհան Կախիկ Որոտնեցին է գրել, — Պրոֆ. Ֆետտէր այս ամէնը ի մի ամփոփելով և հայերեն օրինակները կրկին անգամ Գերմաներեն թարգմանելով, քննադատական ծանօթութիւններով և գիտնական բացատրութիւններով ճոխացրած՝ ընծայել էր այնպիսի

մի խնամքով հրատարակութիւն, որպիսին շատ սակաւ հայերեն յիշատակարանների է վիճակուել:

Նա աշխատում է ցոյց տալ, որ Պօղոս առաքեալին ընծայուած այդ անվաւեր գրագրութիւնը Կորնթացուց հետ՝ բոլոր մինչև այժմ յայտնի օրինակներին նայելով, թարգմանուած է ասորերէնից, Ապա նա Յասնի հետ համաձայն ընդունում է, որ այդ գրագրութեան մեծ մասն առնուած է «Գործք Պօղոսի», նոյնպէս անվաւեր, բայց մի քանի եկեղեցական հայրերից գովութեամբ յիշուած յիշատակարանից, Կեղծ հեղինակը իւր այդ յունարէն աղբիւրից առել է Կորնթացուց թուղթն առ Պօղոս, միջանկեալ պատմական մասը և Պօղոսի թղթի 1-22 * տները, մնացածը միայն իւր կողմից աւելացնելով, — Պրոֆ. Ֆետտէր սկզբում կարծում էր, թէ գոնէ այս վերջին մասը հեղինակն իւր կողմից է շարագրել, բայց վերոյիշեալ բրոշիւրով ցոյց է տալիս, որ նա այստեղ էլ մի ուրիշ աղբիւր ի նկատի է ունեցել, մի Գլուխ ** որից քաղել է 25—33 տները, իսկ 34—40 *** կցցել է նոր Կտակարանի դանադան ասացուածքներից, Եւ որովհետև այսպիսի մի հրէական աղբիւրից օգտուելու և ասորերէնի վերածելու համար հեղինակը կամ ազգաւ հրէայ պէտք է լինէր, կամ հրէաների մէջ մեծացած մէկը՝ Ֆետտէր ենթադրում է, որ Առ Կորնթացիս Գ. թուղթը յառաջ է եկել Եփեսոսի հրէայ — քրիստոնեաների շրջանում:

Արդէն առաջ նա, ի նկատի առնելով մանաւանդ այն հանգամանքը, որ կեղծ հեղինակի կողմից աւելացրած մասերը յարութիւն ուրացողների դէմ են ուղղուած, և յենուելով Եփրեմ Ասորու վկայութեան վերայ՝ բաւական աշափ հաստատուն էր ընդունում այն կարծիքը, թէ Առ Կորնթացիս Գ. թուղթը մի վիճական գրուածք է ընդդէմ Բարդաճան աղանդաւորի կամ նորա հետեւողների, Սակայն ըստ իս այդ կարծիքը բաւականաչափ հաստատուն չէ և Եփրեմի վկայութեան զուգակշիռ կարող է համարուել Եզնիկ Վողբացու վկայութիւնը, **** որով «Մարկիոնի» Մանի և այլք նոյնպիսիք՝ հակառակ էին «մարմնոց յարութեան» գաղափարին, Իսկ այդ բոլոր աղանդաւորները Բարդաճանից ոչ պակաս ազդեցութիւն են ունեցել Ասորիքում, մանաւանդ Մարկիոնեանց, որոնց ուսումը մի ասորու համար Գ. դարում շատ աւելի կասկածելի և վտանգաւոր էր գուցէ, քան Բարդաճանի վարդապետութիւնը:

Ո՛չ պակաս տարակուսական են ինձ համար

* Eine rabbinische quelle des apokryphen dritten Korintherbriefes - երեւի արտատպութիւն Tübinger Quartalschrift ամսագրից:

** Der apokryphe dritte Korintherbrief (Tübinger Universitätsprogramm 1894). Wien.

*** Geschichte des neutestamentlichen Kanons. II. 1891 p. 595—606.

* Չոհրաբեանի հրատարակութեան մէջ 1—32.

** Հրէից բարբոսներին մեկնութիւն, ս. գրքի որ եւ է հատուածի մասին:

*** Չոհրաբ. 36—50 եւ 51—60

**** Եղծ աղանդոց. Վենետիկ. 1826. եր. 290 շ: